ՅՈՒՐԳԵՆ ՄՈԼԹՄԱՆ

ՀՈՒՅՍԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. *ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*

Սկիզբը՝ թիվ Բ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՎԱԾ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Ա. Պատմական եղանակը[1]

Պետրոս Ռամուսի եւ Ռենե Դեկարտի շնորհիվ աշխարհիկ կյանքում ձեռք բերված մարդկային փորձառության հիմնարար կանոնավորումից եւ բնական գիտություններում նրանց արձանագրած առաջադիմությունից սկսած՝ բոլոր ջանքերը գործադրվել են նաեւ պատմության փորձառության եւ պատմության դիտարկման գործընթացի կանոնավորման ուղղությամբ։ Հետեւաբար պատմական եղանակին առնչվող հարցը վերաբերում է ոչ միայն պատմաբանի աշխատանքի հնարներին ու կերպերին, այլեւ առավել ընդգրկուն իրողություններին՝ պատմական գիտելիքների առանձնահատկությանը եւ պատմության գիտական բնույթին։

Առանց «եղանակի» հնարավոր չէ վստահելի իմացություն ձեռք բերել։ Այդ իսկ պատճառով պատմական եղանակն իր մեջ բովանդակում է հետազոտության սկզբունքներն ու վերջինիս արդյունքների վերահսկելի քննադատության համար նախատեսված հիմնական դրույթները։ Այն բանից հետո, երբ ԺԹ. դարում բնական գիտությունները փորձարարական արդյունքների հավաքագրումից ու ամփոփումից անցում կատարեցին բնության օրենքների ճշգրիտ եւ ստուգելի համակարգվածության նախագծի մշակմանը, եւ քանի որ ճշգրիտ «գիտություն» առհասարակ նշանակում էր «բնական» գիտություն, անհրաժեշտություն եղավ պատմության գիտական բնույթի եւ, ընդհանրապես, պատմական

[1] *Տես* „Geschichte“, in: „Fischer-Lexikon“, bd. 24, hrsg. von Waldemar Besson, Frankfurt am Main, 1961, *էջ 78։*

գործընթացների օրինաչափությունների վերաբերյալ հարց բարձրացնել։ Թեեւ ԺԹ. դարավերջից սկսած՝ Վիլհելմ Դիլթայը շեշտադրում էր մարդասիրական (հումանիտար) գիտությունների եղանակների առանձնահատկությունը, բնագիտության գիտական հայեցակարգից որոշակի նվազագույն պահանջներ, այնուամենայնիվ, ներմուծվել են նաեւ պատմագիտության մեջ.

ա) Պատմական գիտությունն արվեստ, քնարերգություն կամ առասպել չէ, այլ նրա հիմքում ընկած ճշմարտության հայեցակարգն ստուգելի փաստերի ճշմարտացիությունն է։ Պատմագիտական պնդումների պատմական ճշգրտությունը պետք է փաստարկված լինի սկզբնաղբյուրներով, որոնց վավերականությունը կարող է ստուգել ամեն ոք եւ ամեն պահի, եւ վերջիններիս միջոցով նաեւ՝ ապացուցման ենթակա ու ստուգելի իրադարձություններով։ Պատմությունը «առասպել ու փաստ» չէ (Ռ. Բերտրան), այլ որքանով այն հավաստի գիտելիք է փնտրում, այդքանով հղում է պնդման ու իրողության միջեւ առկա ստուգելի համապատասխանությանը։

բ) Պատմության իմացության պատմական ճշգրտությունը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ գիտելիքը վերահսկելի է։ Սկզբնաղբյուրների եւ դրանց քննադատության հետ նրանց կապվածությունն արտահայտում է իրականությանն աղերսվող պնդումներ, որի մասին խոսում եւ որը՝ արված պնդումների վերահսկելիության հետ գոյություն ունեցող կապը, ձգտում է ճանաչել պատմությունը։

գ) Սույն վերահսկելիությունը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ սկզբունքորեն հնարավոր է վերահաստատել պատմական իրադարձությունները։ Պատմական իմացությունը վստահելի է դառնում միայն այն դեպքում, երբ ամեն պահի եւ եղանակի ջանք գործադրող ամեն ոք կարող է ստուգել վերջինիս հավաստիությունը։ Բայց եւ այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել վերջինիս իսկությունը, միշտ հարկավոր է նյութերն ու սկզբնաղբյուրներում վկայված իրողությունները կրկին բացահայտել։ Պատմական իրադարձությունները վերականգնելու այս հնարավորությունը, այսպիսով, վերածվում է իրական դեպքերի՝ առհասարակ որպես փաստերի առանձնահատկության։ Այստեղ է պատմագիտությունը տարբերվում առասպելից ու կենդանի հիշողությունից, փորձառության եւ անսպասելի հանդիպման հայտարարություններից։

դ) Պատմագիտությունը նույնպես գործ ունի որոշ վարկածների, նախագծերի, հարցադրումների ու մտահորիզոնի հետ, որոնց միջոցով իրողությունները լուսաբանվում եւ փորձարկվում են որպես իրողություններ։ Մինչդեռ այժմ, երբ բնագիտական մտայնությունը գիտափորձի միջոցով պահանջում է բնության պատասխանը եւ այն դիտարկում որպես երեւույթ ու փորձառություն, պատմական իրադարձություններն արդեն վերաբերում են մեկնաբանություններին եւ գիտելիքի ծավալներին, որոնց օգնությամբ էլ փոխանցվում է դրանց փորձառությունը։ Հետեւաբար պատմաբանի առաջնահերթ գործը պետք է լինի պատմական վկայությունների՝ որպես սկզբնաղբյուրների ընթերցումն ու բազմաբնույթ մեկնաբանությունների, հակվածությունների եւ չափազանցված դատողությունների միջոցով միջնորդավորյալ դեպքերի թվագրումը, տեղայնացումը եւ «պատմական փաստացի հանգամանքների» ուսումնասիրումը։ Այսպիսով՝ պատմության հետազոտված փաստերը հիմք են հանդիսանում վկայությունները, մեկնաբանություններն ու ավանդությունները պատմական գիտակցության քննադատությանը ենթարկելու համար։ Այդ իսկ պատճառով պատմական եղանակը նախեւառաջ քննադատորեն է վերաբերվում ավանդություններին եւ պատմական սկզբնաղբյուրներին։ Որեւէ իրադարձությանն առնչվող ավանդությունների նմանատիպ ջախջախումը[2], այնուամենայնիվ, ինքնին միշտ կապված է ոչ միայն անհատական երեւակայության եւ պատկերացման կարողությունների հետ, թե ինչպես կարող էր «իրականում» զարգանալ վերոնշյալ իրողությունը, այլեւ միշտ համադրված է [պատմական դեպքերի ընդհանուր պատկերի] վերականգնման գործընթացի հետ։ Պատմական իրադարձությունների իրական ընթացքի այսօրինակ վերականգնման գործընթացները, իրենց հերթին, ներկայացնում են նախագծեր, վարկածներ եւ տեսակետներ, որոնք պետք է ստուգվեն սկզբնաղբյուրների միջոցով։ Հետեւաբար պատմական քննադատությունը միշտ հենված է պատմական պատկերացման վրա՝ լինի դա սկզբնաղբյուրներով փոխանցված թե անհատական։ Այսինքն՝ պատմական քննադատությունը միշտ կապված է պատմական հայտնագործությունների[3] հետ։

---

[2] *Նշյալ հատվածում հեղինակը նկատի ունի խնդրո առարկա հարցի վերաբերյալ քննադատական ջախջախիչ մոտեցումը (ծնթ.՝ թրգմ.)։*

[3] *Բնագրի սույն հատվածում հեղինակը կիրառել է հունարենից ծագող եզր՝ «εὑρίσκω»՝ «գտնում եմ», «հայտնաբերում. անգլ.* heuristic*՝ գյուտական, գտողական եզրից։*

Պատմական փորձառության մշակումը պետք է «առարկայացնի» պատմական իրականությունը։ Պատմական մոտեցումը պետք է անցյալի պատմությունը տեղափոխի պատմական մի տարածության, որտեղ հնարավոր կլինի վերջինիս անկողմնակալ ուսումնասիրումը։ Այն պետք է սահմանի պատմական իրականությունը, հետեւաբար պետք է ենթադրի, որ սույն իրականությունը հաստատված իրողություն է, որն այլեւս չի փոփոխվում։ Լիովին հասկանալի պատճառներով պարզվում է՝ որքան շատ է խոսվում «ժամանակակից պատմության» մասին, այդքան վերջինս ավելի դժվար է դառնում, որովհետեւ ուսումնասիրության առարկան այստեղ հաստատուն կերպով սահմանված չէ, այլ դեռ գտնվում է փոփոխական վիճակում։ Այստեղ պատմություն[4] դիտարկողը չի հակադրվում պատմությանը, այլ հայտնվում է պատմական դեպքերի կենտրոնում եւ իր կանխատեսման միջոցով ներազդում հենց վերոնշյալ իրադարձությունների վրա։ Ըստ էության, ամբողջ պատմությունը ժամանակակից պատմությունն է։ Այսպիսով՝ պատմության ուսումնասիրության առարկան ինքնին գտնվում է կրկնաբնույթ շարժման մեջ. «Մի կողմից դա բխում է ողջ անցյալ կյանքի գործընթացային բնույթից, իսկ մյուս կողմից՝ պատմությունը մտահայող մարդու հաստատուն փոխակերպությունից. վերջինս ինքնին ենթակա է պատմական զարգացման գործընթացին»[5]։ Այդ իսկ պատճառով ճշմարիտ է հին ասացվածը, թե՝ «Պատմությունը պետք է կրկին ու կրկին վերաշարադրել»։ Պատմությունը դիտարկողի պատմականության կետում միշտ տեղի է ունենում «ներկան»՝ «առարկայի» միջոցով, պատմական ներկան՝ պատմական նյութով, փոփոխականության վիճակում գտնվող եւ սեփական գիտելիքով ու

Որպես գիտության ոլորտ՝ այն ուսումնասիրում է ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները։ Գիտողականությունն ընկալվում է որպես հնարքների, միջոցների եւ եղանակների ամբողջություն, որը հեշտացնում եւ պարզեցնում է ճանաչողական, կառուցողական, գործնական խնդիրների լուծումը։ Այն զարգանում է փիլիսոփայության, հոգեբանության, արհեստական բանականության, կառուցվածքային լեզվաբանության, տեղեկատվական տեսության, մաթեմատիկայի եւ ֆիզիկայի խաչմերուկում (առավել մանրամասն տե՛ս «Философия: Энциклопедический словарь», под редакцией А. А. Ивина, Москва, 2004. А. А. Ивин, А. Л. Никифоров, Словарь по логике, Москва, 1997. *հմմտ.* Emiliano Ippoliti, Reasoning at the Frontier of Knowledge: Introductory Essay, in: "Heuristic Reasoning: Studies in Applied Philosophy, Epistemology and Rational Ethics", vol. 16, Switzerland, 2015, *էջ 1–2, ծնթ.՝ թրգմ.)։*

[4] *Գերմաներենում* «historische» *բառն ունի «պատմական» իմաստ, սակայն, հաշվի առնելով հայերենի լեզվամտածողության առանձնահատկությունները, խնդրո առարկա եզրը որոշ մասերում փոխարինել ենք «պատմություն» բառով (ծնթ.՝ թրգմ.)։*

[5] *Տե՛ս* „Geschichte", in: „Fischer-Lexikon", bd. 24, *էջ 80։*

որոշմամբ ներազդված պատմությունը՝ անտեսված ինչ-որ պատմության հետադարձ ակնարկի միջոցով կենսագործելու վճռորոշ գործընթացը։ Հետեւաբար անցյալի պատմության հանդեպ պատմական, առարկայականացնող վերաբերմունքն ինքնին խիստ պատմական եւ պատմություն կերտող հարաբերություն է։

Բ. Պատմական էվրիստիկա.

«Մերկ» փաստերն ուսումնասիրելու նպատակով պատմական եղանակը գործ ունի ո՛չ միայն անցյալի պատմական պատկերների ջախջախիչ քննադատության հետ, այլեւ ինքնին պետք է սկզբնաղբյուրի բովանդակած նյութին հակադրի իր սեփական հարցադրումներն ու նախագծերը։ Թեեւ պատմական քննադատությունը, հանուն իրականության, խստորեն քննախոսում է փաստերի՝ սկզբնաղբյուրներում առկա մեկնաբանությունները, այնուամենայնիվ իրողությունն ինքնին չի կարող ընդհանրապես հայտնաբերվել ու հաստատվել առանց այլ բացատրությունների։ Պատմագիտության մեջ փաստերը ոչ թե առաջին տվյալներն են, այլ վերացարկման վերջին արդյունքը՝ ավանդական մեկնաբանություններից մինչ առարկայականության ներկայիս ընդհանուր եւ ակնհայտ ընկալումը[6]։ «Փաստը» [ընդհանուր] հիմքն է, որը բխում է սկզբնաղբյուրների եւ ավանդույթների մեկնաբանական միջնորդություններից։ Գիտափորձի ընթացքում բնագետը պետք է մեկուսացնի իր ուսումնասիրության առարկան, բացառի խնդրո առարկա չհանդիսացող գործոնները եւ անտեսի այլաբնույթ հարցերը՝ առավել հստակ արդյունքներ ստանալու համար։ Այս գործընթացը, հետեւաբար, դժվար իրագործելի է պատմական ուսումնասիրության առարկաների պարագայում, քանի որ միշտ գործ ենք ունենում չափազանց բարդ կառուցվածքների հետ, որոնց մեկուսացումը վերացնում է վերջիններիս բազմաբնույթ պայմանականությունը։

Այսպիսով՝ պատմական գիտությունն այնքանով, որքանով որ առանձին փաստը մեկուսացնում է վերջինիս համաբնագրից [այսինքն՝ պատմական միջավայրից] եւ այն ամփոփում միայն մեկ խնդրի մեջ, միեւ-

[6] *Համա.* E. Rothacker, Die dogmatische Denkform in den Geistewissenschaften und das Problem des Historismus, Abhandlungen der geistes- und sozialwissenschaftlichen Klasse der Akademie der Wissenschaften 6, Mainz, 1954, *էջ 55։*

նույն ժամանակ պետք է ճիգեր գործադրի՝ մեկուսացված ու մասնավոր փաստերից բազմաբնույթ համաբնա եւ մի խնդրի հայեցակետից մյուս խնդիրների ընդհանրություն վերադառնալու համար։ Հետեւապես մասնավորը ճանաչելի եւ գնահատելի է միայն ընդհանուրի համածիրում, իսկ ընդհանուրը՝ միայն մասնավորի շրջանակում։ Փաստի ու իմաստի դրապաշտական (պոզիտիվիստական) տարանջատումը սկզբունքայնորեն հնարավոր չէ եւ կարող է սահմանվել միայն այն դեպքում, երբ «փաստ» կոչվածի՝ մեր սեփական մեկնաբանության ոլորտը մնա անպաճույճ, անքննադատ ու անգիտակից։ Եթե, համաձայն Մաքս Վեբերի, բանական գիտությունը «հիասթափեցնում» է աշխարհին, եւ փաստերի լիակատար ընկալումը դադարում է այնտեղ, որտեղ դրսեւորվում է արժեքային դատողությունը, ապա ճշմարիտ է այն միտքը, թե արժեքային դատողությունը հայտնվում է ավելի ուշ՝ այլաբնույթ իրողությունների վրա հիմնված աշխարհում արժեքներ ներմուծելու նպատակով, սակայն ոչ այնտեղ, որտեղ արժեքային դատողությունն ինքնին բովանդակված է փաստերի լուսաբանմանն առնչվող մտածողության ոլորտում. այն միշտ ներառված է դրանում։ Եթե այժմ պատմագիտությունը մեկուսացված ու մասնավորված փաստերից անցում է կատարում պատմության ընթացքը բովանդակող ընդհանուր պնդումներին, ապա ի հայտ է գալիս պատմական հայեցակարգի ձեւավորման խնդիրը[7]։ Անհրաժեշտ է կիրառել ընդհանրացնող եւ բնութագրող հասկացություններ։ Սույն պատկերացումներն իրենց պարտավորեցնող բնույթը ձեռք են բերում համապատասխան հարցի ձեւակերպումից եւ վերջինիս հետ կապված հեռանկարից, այդ իսկ պատճառով չունեն պատմական գործընթացները, որպես այդպիսին, արտացոլելու հավակնություններ, այլ պատմական գործառույթներն ընկալելու եւ բացատրելու գտողական մտահայեցության կերպեր ու միջոցներ են։ Վերոնշյալ հասկացությունները տվյալ խնդրի վավերացման պահանջն ունեն, հետեւաբար մշտապես հարցականի տակ են դրվում։ Նմանատիպ միջոցներից է «պատմական օրենքի» հասկացությունը։ Իրադարձությունները բացատրելի են դառնում այն դեպքում, երբ հնարավոր է լինում մտահայել դրանց պատճառները։ Այս պատճառահետեւանքային կապը, սակայն, նախապես ենթադրում է կեցության համահավասար մակարդակ, որի շնորհիվ պատճառն

[7] *Տես* R. Wittram, Das Interesse an der Geschichte, Göttingen, 1958, *էջ 33։*

ու հետեւանքը վերաբերում են մեկը մյուսին։ Այսպիսով՝ պատմությունը պետք է լինի կա՛մ հասարակական, կա՛մ քաղաքական եւ կա՛մ հոգեմտավոր պատմություն[8], այսինքն՝ հարկավոր է սահմանել պատմության էությունը, որպեսզի կարողանանք պատկերացնել նմանատիպ պատճառահետեւանքային փոխկապակցվածությունը։ Վերոգրյալը, այնուամենայնիվ, կարող է դրսեւորվել միմիայն համանմանություններով ու կրկնաբանություններով եւ պատմության որոշակի գործընթացներում, որոնք օժտված են հստակ ինքնաշարժությամբ։ Դրանից զատ՝ պատմական գործընթացներն այնքան բարդ են, որ երբեմն հնարավոր չէ պատճառահետեւանքային պայմաններն ամբողջությամբ սահմանել, այլ մշտապես միայն մասամբ։ Առանձին պատճառները կարելի է պատմության մեջ հաստատել միայն այլ շարակարգերի անտեսման ու քողարկման ճանապարհով։ Մյուս կողմից՝ պատմական պատճառականությունը զուրկ է դարձունակության բնույթից[9]։ Հավանաբար, կարելի է հետեւանքից մակաբերել պատճառը, բայց դժվար թե՝ պատճառից՝ հետեւանքը։ Հետեւապես ճշմարիտ պատմականը ավելի շուտ հնարավորության հասկացության մեջ է, քան անհրաժեշտության. բոլոր հնարավորությունները երբեք չեն դառնում պարզ անհրաժեշտություններ։ Այսպիսով՝ պատճառականության հայեցակարգը նույնպես կարող է միայն գյուտարարական նշանակություն ունենալ։

---

[8] *Գերմաներեն բնագրի սույն հատվածում հեղինակը կիրառել է «*Geistesgeschichte*» (գերմ.՝ «*Geist*» նշանակում է «հոգի, ոգի, միտք», եւ «*Geschichte*»՝ պատմություն) եզրը՝ բնորոշելու համար պատմագիտության այն ճյուղը, որը զբաղվում է գաղափարների ու մտածողների ուսումնասիրմամբ։ Հաշվի առնելով բնագրի՝ տվյալ հատվածում առկա լեզվաոճական առանձնահատկությունները՝ հիշյալ եզրույթը թարգմանել ենք «հոգեմտավոր», սակայն, իրականում, այն անթարգմանելի է։ Այդուհանդերձ, պատմության ընթացքում եղել են բառը սահմանելու որոշ փորձեր (Վ. Դիլթայ, Մ. Դվորժակ, Է. Հելլեր եւ այլք), որոնց շնորհիվ «*Geistesgeschichte*» եզրը թարգմանվել է «մտավոր պատմություն», «գաղափարների պատմություն» արտահայտություններով, իսկ երբեմն էլ, որպես հոմանիշ, օգտագործում են «խնդրի պատմություն» ձեւակերպումը։ Հոգեմտավոր կամ մտավոր պատմության առաջին նախադրյալն այն է, որ գաղափարներն առանձին չեն զարգանում այն մարդկանցից, որոնք զարգացրել եւ օգտագործել են դրանք, եւ մարդիկ պետք է ուսումնասիրեն գաղափարները ո՛չ միայն որպես վերացական պնդումներ, այլ նաեւ՝ մշակույթի, կյանքի եւ պատմության շրջանակներում (սույնի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս* M. Mandelbaum, The History of Ideas, Intellectual History, and the History of Philosophy, „History and Theory“, Beiheft 5, 1965, *էջ 33–66. նաեւ՝* M. Richter, „Begriffsgeschichte“ and the History of Ideas, „Journal of the History of Ideas“, 1987, *էջ 247–263։ Հմմտ.* A. Lovejoy, The Great Chain of Being. A Study of the History of an Idea, Harvard, 1936 *եւ այլն)։*

[9] *Տե՛ս* „Geschichte“, in: „Fischer-Lexikon“, bd. 24, *էջ 83։*

«Միտումների» (տենդենցներ) ուսումնասիրությունն այս կապերի ընկալման մեկ այլ հայեցակարգային միջոց է։ Գերմանական պատմագրության մեջ սույն եզրի կիրառությունը տարածված է եղել դեռեւս Լ. Ռանկեի[10] ժամանակաշրջանից։ Սակայն այն պատմա-դիալեկտիկական մատերիալիզմում[11] օգտագործել են նաեւ Գեորգի Լուկաչն[12] ու Էռնստ Բլոխը[13]։ Դրանով մերժվում է գիտական պատճառականության խստությունը, իսկ անցումը պատմական շարժումներում նկարագրվում

---

[10] Լեոպոլդ ֆոն Ռանկեն *(1795–1886 թթ.) գերմանացի հայտնի պատմաբան է, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր, իսկ 1841 թվականից՝ Պրուսական թագավորության պաշտոնական պատմագիր։ Վերջինիս հայացքները ձեւավորվել են իդեալիզմի եւ բողոքականության ազդեցությամբ։ Ըստ նրա՝ պատմության ընթացքն աշխարհի կառավարման «աստվածային ծրագրի» իրականացումն է (պրովիդենցիալիզմ), որում վճռական դերակատարություն ունի կրոնը։ Ռանկեն խիստ կարեւորել է քաղաքական ու դիվանագիտական պատմությունը, «հայտնի մարդկանց» (արքաներ, զորավարներ, հոգեւոր առաջնորդներ եւ այլն) գործունեությունը՝ միաժամանակ անտեսելով հասարակական հարաբերությունները։ Այդ սկզբունքներն արտահայտված են նրա՝ «Ռոմանական եւ գերմանական ժողովուրդների պատմությունը 1494–1535 թթ.» (1824 թ.), «Պրուսական պատմության տասներկու գիրք» (հտ. 1–5, 1874 թ.) եւ մյուս հիմնարար աշխատություններում։ Ռանկեի ներդրումը պատմագիտության զարգացման մեջ նրա հետազոտական կերպն է, համաձայն որի՝ առարկայական ճշմարտությունը բովանդակված է գլխավորապես արխիվային նյութերում (ինչ չկա փաստաթղթերում, գոյություն չունի պատմության համար), աղբյուրների ճիշտ օգտագործումը պահանջում է բանասիրական վերլուծություն եւ փաստաթղթերի հավաստիության վավերացում (Լ. Ռանկեի եւ նրա գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս* Frederick C. Beiser, The German Historicist Tradition, Oxford University Press, 2011, *ինչպես նաեւ՝* Andreas D. Boldt, The Life and Work of the German Historian Leopold von Ranke (1795–1886): An Assessment of His Achievements, New York, 2015: *Հմմտ.* Е. Щепкин, Автобиография Л. Ранке, «Русская мысль», 1893. *տե՛ս* О. Л. Вайнштейн, Леопольд фон Ранке и современная буржуазная историография, Москва-Ленинград, 1961 *եւ այլն, ծնթ.՝ թրգմ.)։*

[11] *Տե՛ս* G. Lukacs, Geschichte und Klassenbewußtsein, Berlin, 1923. E. Bloch, Das Prinzip Hoffnung, Frankfurt, 1959*։*

[12] Գեորգի Լուկաչ *(1885–1971 թթ.) – հրեական ծագմամբ հունգարացի փիլիսոփա-նեոմարքսիստ, գրական քննադատ, արեւմտյան մարքսիզմի առանցքային դեմքերից մեկը, մարքսիզմի բուդապեշտյան դպրոցի հիմնադիր։ Առավել մանրամասն տե՛ս* Fritz J. Raddatz, Georg Lukács in Selbstzeugnissen und Bilddokumenten, Hamburg, 1972. *տե՛ս նաեւ* Agnes Heller, Die Seele und das Leben. Studien zum frühen Lukács, Frankfurt am Main, 1977. László Sziklai, Georg Lukács und seine Zeit: 1930–1945, Wien, 1986. Frank Benseler, Lukács, Georg, In: „Neue Deutsche Biographie" (NDB), bd. 15, Berlin, 1987, *էջ 509–513։ Հմմտ.* Ш. Ишицука, Понятие природы у Лукача и Гуссерля, перевод В. В. Бибихина, Философия и человек, Москва, 1993, ч. II., *էջ 224–227, ինչպես նաեւ՝* А. Н. Дмитриев, Марксизм без пролетариата: Георг Лукач и ранняя Франкфуртская школа (1920–1930-е гг.), Санкт-Петербург, 2004, *էջ 528, եւ* С. Н. Земляной, Духовные искания молодого Лукача, «Логос», 2006, №1, *էջ 109–115 (ծնթ.՝ թրգմ.)։*

[13] Էռնստ Բլոխ *(1885–1977 թթ.) – նեոմարքսիստական ուղղվածության գերմանացի փիլիսոփա, հասարակագետ եւ հրապարակախոս, «Հույսի փիլիսոփայության» ու «Դեռեւսան-էության» գոյաբանության ստեղծողը։ Սույն հեղինակի եւ նրա գաղափարների առնչությամբ տե՛ս* Werner Raupp, Ernst Bloch, in: „Biographisch-Bibliographisches Kirchenlexi-

է ոչ որպես անցում պատճառից դեպի հետեւանք, այլ հնարավորությունից առ իրականություն։ Հնարավորությունների ու իրագործված իրողությունների միջեւ ոչ թե պատճառական անհրաժեշտությունն է, այլ միտումը, մղումը, հակումը, ուղղվածությունը, տրամադրվածությունը որեւէ բանի նկատմամբ, ինչը կարող է որոշակի պատմական հանգամանքների զուգադիպման պարագայում իրական դառնալ։ Էռնստ Թոփիչը կարծում է, որ սույն դրսեւորումը քողարկում է «գործողության, արժեքի եւ ինքնուրույն զարգացման (էվոլյուցիայի) միջեւ առկա հարաբերությունների նրբաբնույթ խնդիրը»։ Ռ. Վիթթրամը ենթադրում է, որ նշյալ «դրսեւորումն ամբողջությամբ կարող է որեւէ առնչություն չունենալ առարկայական նպատակաբանության (տելեոլոգիա) հետ, եւ որ այն կարող է պատմական որոշակի իրադարձությունների շրջանակում արտահայտել միայն «մղման» իմաստ»[14]։ Գ. Լուկաչի եւ Է. Բլոխի համար «միտում» եզրը նշանակում է ինչ-որ բան, որն իրական-առարկայական հնարավորությունները միջնորդավորում է անհատական որոշումների հետ եւ այս առումով՝ պատմական «փաստերը», ինչպես նաեւ պատմական դիտորդի մասնավոր որոշումները տեղակայում պատմական գործընթացի հորձանուտում։ Սակայն այս դեպքում գյուտարարական միջոցներով «միտումների» ուսումնասիրությունը նախատեսում է պատմության ընդհանուր նպատակաբանական (տելեոլոգիական) ուղղորդված միտում։ Պատմական համատեքստերն ընկալելու համար Է. Ռոթհաքքերն առաջարկել է «ոճ» հասկացության կիրառումը։ «Այն, ինչ կոչվում է «պատմական մտածողություն»՝ բառիս ընդգծված ու խանդավառ կիրառությամբ, առաջին հերթին նպատակամղված չէ փաստերի հաստատմանը, այլ ներկա տարբերանշանների, ոճերի դրսեւորումների, որոնցով դասակարգվում են սույն փաստերը՝ հնարավորինս հարազատ ընկալմանը»[15]։ Թեեւ այս հայեցակարգն սկզբնավորվում է արվեստի պատմությունից, այն համապատասխանում է իրերի հանդեպ առկա գեղագիտական հայացքին։ Սակայն պատմական համատեքստեր տեղափոխելիս այն նշանակում է իրադարձությունների ու գործողությունների մարդաբանական եւ հասարակագիտական կապակցվածություն՝ փորձա-

kon“, bd. 14, Herzberg, 1998, *այուն. 783–810, ինչպես նաեւ՝* P. Thompson & Slavoj Žižek, The Privatization of Hope: Ernst Bloch and the Future of Utopia, Durham, 2013 *եւ այլն (ծնթ.՝ թրգմ.)։*

[14] *Տես* R. Wittram, *նշ. աշխ., էջ 44։*

[15] *Տես* E. Rothacker, *նշ. աշխ., էջ 23։*

ության ու կյանքի մասին պատկերացումների համապատասխան «միջավայրի» հետ։ Այստեղ նկատի ունի «կենսակերպը», այսինքն՝ ապրելու կերպը, գործելաոճը։ Ինչպես կենդանին ունի իր տեսակին հատուկ՝ աշխարհին կենսականորեն անհրաժեշտ ակներեւության «միջավայր», այնպես եւ մարդիկ ապրում են փորձառության տեսակներից, կենսակերպի սովորույթներից, ինչ-որ հաստատություններից եւ կյանքի հանդեպ ունեցած ակնկալիքներից ձեւավորված մշակութային «միջավայրում», որի շրջանակում նրանք ընկալում են պատմությունը եւ գործում պատմականորեն։ Փաստեր փնտրող պատմաբանը համապատասխանորեն խախտում է մեկնաբանության ու փորձառության այս պատմական հորիզոնը, մինչդեռ իրականում փաստերն ու գործողությունները պատմական են դարձել միայն իրենց լեզվի, իրավական ոճի, աշխարհայացքի եւ կյանքի վերաբերյալ պատկերացումների, կրոնական գաղափարների եւ տնտեսության ձեւերի՝ համապատասխան ու ընթացիկ «միջավայրում»։ Նույն կերպով «կառուցվածք» հայեցակարգը փորձում է ըմբռնել համապատասխան հասարակական հաստատությունները, որտեղ պատմությունն ընդունվել ու դիտարկվել է որպես կյանքի դրսեւորումների եւ կյանքի կանոնակարգերի մի աշխարհ, որը պատմականորեն արդյունավետ է եղել[16]։ Հասկացությունների սույն շրջանակը մեզ տանում է ավելի հեռուն՝ դեպի «ձեւերի» (կամ՝ «կաղապարների») պատմություն։ Ձեւապաշտական պատմագրությունը նույնպես ունի հասարակագիտական ուղղվածություն, այն դեպքում, երբ այն պատմական խմբերի ու հասարակությունների կյանքում կատարված հայտարարությունների սահմանակարգային հիմնավորման հարցն է շոշափում եւ ուսումնասիրում է ոչ այնքան անհատական, որքան կրոնական, իրավական, մշակութային, քաղաքական բնույթի ու արվեստին բնորոշ հայտարարությունների «տեղը կյանքում»։ Վերջապես «գոյության ընկալման» հայեցակարգը նույնպես նմանատիպ գյուտարարական միջոց է[17]։ Դրա շնորհիվ անցյալի պատմության երեւույթները կեցության՝ մարդկային ըմբռնման հնարավորությունների հիման վրա մեկնաբանվում եւ բերվում են գիտակցության ոլորտ։ Գյուտարարական ձեւաչափը բաղկացած է «վիճակից» ու «որոշումից», մարտահրավերից ու [համարժեք] պատասխանից, իսկ

---

[16] *Տե՛ս* F. Braudel՝ *ըստ* R. Wittram, *նշ. աշխ., էջ 44։*

[17] *Տե՛ս* M. Heidegger, Sein und Zeit, 8 Aufl., Tübingen,1957, *էջ 382։*

անցյալի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է անհատը փորձառել պատմությունը եւ ընդունել պատասխանատվությունը, եւ ինչպես են նրա մեջ հայտնաբերվել, գիտակցվել կամ ոչնչացվել գոյության հնարավորությունները։ Պատմությունն այս դեպքում հետաքրքրված է ոչ այնքան բուն իրադարձություններով եւ վերջիններիս՝ այլ իրողությունների հետ ունեցած պատճառական կամ միտումնավոր կապերով, որքան, հավանաբար, առկա գոյության պատմականությամբ եւ մարդկային կեցության հնարավորություններով։ Այսպիսով՝ պատմական եզրաբանության սանդղակը տատանվում է «փաստերից» մինչեւ գոյության հնարավորություններ, ճշգրիտ բնական գիտությունների առումով՝ «առարկայականությունից» մինչեւ բացառիկ անթերի մարդկային անհատականություն եւ ներունակություն։ Մենք այստեղ առանձնացրել ենք միայն մի քանի բնորոշ օրինակներ։ Ինչպես արդարացիորեն նկատում է Ռ. Վիթթրամը, «բոլոր ընդհանուր պատմական եզրերն օժտված են ինչ-որ փոփոխականությամբ»[18]։ Դրանք գյուտարարական (էվրիստիկ) հասկացություններ են, որոնց կիրառելիությունը հարկավոր է հաճախակի, մանրակրկիտ կերպով ստուգել։ Այնուամենայնիվ ճկունությունը, որով նրանք դիմակայում են համակարգից ներս բնազանցագիտական ամրապնդմանն ու իրենց տրամաբանական միանշանակությանը, հիմնված է ոչ միայն դիտարկողի սահմանափակ պատմական հեռանկարի վրա, որը կիրառում է դրանք՝ առեղծվածային իրականությունը լուսաբանելու նպատակով։ Այն հիմնված է նաեւ այն հանգամանքի վրա, ըստ որի՝ հասկացությունների համար միանշանակ եւ ընդմիշտ հաստատված իրականությունը դեռեւս հասանելի չէ։ «Ազգ», «դասակարգ» կամ «մշակույթ» եւ նմանատիպ այլ հայեցակարգերը հաստատուն ստորոգություններ չեն, որոնցում կարելի է, ըստ փորձառության, հավաստել ազգի, դասակարգային պայքարի կամ մշակույթի պատմությունները, այլ իրականում «ազգ», «դասակարգ», «Եկեղեցի» եւ այլ հասկացություններն ինքնին պատմական տեսակետից գտնվում են ընթացքի մեջ, պատմականորեն վիճարկվում եւ հետեւաբար պատմական առումով ենթարկվում են փոփոխության։ Եթե պատմականության առանցքային գաղափարն այն է, թե ինչ-որ առարկայի էությունը կարող է ընկալելի լինել նրա պատմական զարգացումից, եւ պատմական գործընթացի արդյունքը որոշվում է միայն պատմական

[18] *Տե՛ս* R. Wittram, *նշ. աշխ., էջ 43։*

ընթացքի շրջանակում, ապա «իրագործված, բացարձակ հայեցակարգերի երկիրը» չի կարող հասանելի լինել մասնավորից ընդհանուրի վերացարկման ճանապարհով, ինչպես նաեւ անցյալի համապարփակ վերանայման եղանակով, սակայն այս դեպքում հիշյալ երկիրը պատմության դեռեւս չբացահայտված եզերքն է, որին կարելի է հասնել պատմության սահմաններում կատարված հատվածական կանխատեսումների շնորհիվ միայն։ Ոչ միայն մարդկային մտքին անհասանելի լինելու պատճառով է պատմությունն անորոշ մնում նրա համար, այլ ինքնին պատմության շնորհիվ, որը դեռեւս չի հասել իր վախճանին, հետեւաբար չի կարող վերածվել պատմական ճանաչողության կամ կարող է միայն հատվածաբար, կանխակալ կերպով։

Շարունակությունը՝ հաջորդիվ

Գերմաներենից թարգմանությունը
եւ ծանոթագրությունները՝
ՅՈԼԱԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ